

---

---

**ԷԹՆԻԿ ԽՄԲԵՐԻ ԴԵՐԸ ՈՉ ԱՐԵՎՍՑԱՆ  
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԶ**

ՂԵՎՈՆԴՅԱՆ Ռ. Վ.

Գլոբալ տեղեկատվական դաշտի ընդարձակումը հանգեցրել է տարբեր քաղաքակրթական հարթություններում ներքին արմատական փոփոխությունների, որոնք նախանշում են տվյալ հասարակության զարգացման հետագա ընթացքը: Ժամանակակից աշխարհում ոչ արևմտյան քաղաքակրթական հարթություններին պատկանող հասարակությունները թռիչքային ինքնաարդիականացման միտումներ են դրսևորում: Այսպիսի փոփոխությունները տվյալ հասարակությունների համար նոր նախադրյալներ են ստեղծում աշխատանքի միջազգային բաժանման գործընթացում լինելու ավելի նրպաստավոր դիրքերում և մրցակցելու ավանդաբար առաջնորդի կարգավիճակում գտնվող Արևմուտքի հետ. «Այժմեականությունը սկիզբ է առել Արևմուտքի վերելքով... Բայց քանի որ արդի աշխարհը լայնանում է և ներառում նորանոր տարածքներ, այժմեականությունը վերածվում է հալման կաթսայի»<sup>1</sup>: Այս «համաձուլվածքը» ընդգրկում է ինչպես անդրազգային կորպորացիաներ, պետություններ, հասարակություններ, այնպես էլ ավելի փոքրաքանակ դերակատարներ՝ սոցիալական, շահային, ահաբեկչական, մարզինալ և այլ խմբեր, առանձին անհատներ, որոնցից յուրաքանչյուրն իր ուրույն մասնակցությունն է բերում և այս կամ այն կերպ ազդեցություն գործում ոչ արևմտյան քաղաքակրթությունների զարգացման վրա. «Նոր ուժ են ստացել խմբերն ու առանձին անհատները, իսկ հիերարխիան, կենտրոնացումը և վերահսկողությունը վտանգի տակ են հայտնվում: Գործունեությանը, որն առաջ վերահսկում էին բացառապես կառավարությունները, այսօր մասնակցում են... համաշխարհային առևտրային կազմակերպությունը և Եվրամիությունը... Այդ միջազգային համակարգի անկյուններում իրենց տեղն են գր-տել ահաբեկիչները... նարկոկարտելները, ապստամբները...»<sup>2</sup>: Դեռևս նախորդ դարի հիսնականին ամերիկացի քաղաքագետ Լ. Պայր, դիտարկելով ոչ արևմտյան հասարակությունների ժողովրդավարական անցման գործընթացները, ժողովրդավարության արժեքների համակողմանի տարածման հիման վրա մատնանշեց հասարակության համախմբումն արգելակող հիմնաքարային խոչընդոտներ, որոնք ամփոփվեցին 17 կետում<sup>3</sup>: Նոր աշխարհակարգի պայմաններում այդ կետերն առավել ընդգծված նշանակություն են ստանում: Բազմաէթնիկ տարածաշրջաններում խառնակչախմբերի գոյությունը, երիտասարդության

---

<sup>1</sup> **Закария Ф.** *Постамериканский мир будущего*, М., 2009, с. 105.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>3</sup> **Մարգարյան Մ.**, Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Ե., 2006, էջ 89-92:

պասիվությունը, արտաքին քաղաքականության գերադասումը ներքինի նկատմամբ և ոչ արևմտյան հասարակություններին բնորոշ մյուս առանձնահատկությունները, ի թիվս այլ խնդիրների, կարող են հանգեցնել նաև էթնիկական հակասությունների սրման:

Բազմաէթնիկ հանրություններում էթնիկական միավորների քաղաքական վարքագիծը կանխորոշում է հասարակության զարգացման ուղեծիրը: Էթնիկ խմբերը, լինելով քաղաքական դաշտի դերակատարներ, օգտագործելով սեփական լծակները, ազդեցություն են գործում քաղաքական որոշումների կայացման գործընթացի վրա և ընդունում կամ մերժում են սեփական սպասումների ներառման աստիճանից կախված որոշումներ: Հաշվի առնելով զարգացող տարածաշրջանների հետևողական ինքնաարդիականացումը գլոբալացման համատեքստում՝ կարելի է ենթադրել, որ տարբեր սոցիալական, էթնիկական, քաղաքական և այլ խմբերը նոր իրադրության մեջ, սեփական շահերի համաձայն, պայմաններ են առաջ քաշելու ինչպես տեղային, այնպես էլ գլոբալ տարածություններում: Հետևաբար՝ բազմաէթնիկ տարածաշրջաններում առաջնային նշանակություն է ստանում գերակա և փոքրամասնություն կազմող էթնոսների համագործակցությունը: Ցանցային կառավարման պայմաններում տարբեր խմբերի, ինչպես նաև անհատների կողմից սեփական մո-տեցումները ներկայացնելը հորիզոնական և ուղղահայաց տեղեկատվական ուղիներով հնարավորություն է տալիս հասարակության արդիականացման գործընթացում այլընտրանքային զարգացումներն առավել կանխատեսելի դարձնել: Բազմաէթնիկ տարածաշրջաններում նմանատիպ հնարավորությունների առկայությունը պայմանավորվում է հասարակությունում տարաբնույթ էթնիկ խմբերի ինտեգրմամբ:

Տվյալ քաղաքական ռեժիմում ինքնանույնականացվելով՝ էթնիկ խումբը քաղաքական ինտեգրման գործընթաց է իրականացնում: Ընդ որում, էական նշանակություն է ստանում էթնիկական խմբի կողմից քաղաքական համակարգի լեգիտիմության ընդունումը, քանի որ «քաղաքական ինտեգրումը ենթադրում է քաղաքական համակարգի լեգիտիմության ընդունում էթնիկական խմբի կողմից»<sup>4</sup>: Որոշ դեպքերում հնարավոր են զարգացումներ, երբ էթնիկական խմբի ենթարնտրանին գիտակցորեն կամ ինքնաբերաբար ընդունում է դոմինանտ խմբի կողմից հաստատված քաղաքական ռեժիմի լեգիտիմությունը, հետևաբար, քաղաքականապես ինտեգրվում է տվյալ հասարակությունում, սակայն խմբի հիմնական հատվածը չի ընթանում ընտրանու նախանշած ճանապարհով, ինչը, այնուամենայնիվ, կարող է հասարակությունում էթնիկական հակասություն առաջացնել: Ուստի, պետք է քաղաքական ինտեգրմանը, ինչպես և լեգիտիմությանը

<sup>4</sup> Ким Янг Юнг. Коммуникация и кросскультурная адаптация (Хрестоматия, сост. Праззаскас А. А., М., 2000, с. 162).

վերաբերվել որպես շարունակական գործընթացների: Երրորդ աշխարհի երկրներում անցումը դեպի ժողովրդավարական համախմբում նոր մոտեցում է պարտադրում ընտրանիների կողմից կայացվող քաղաքական որոշումների ընդունման և իրագործման գործընթացներում: Առաջին հերթին, քաղաքական որոշումների ընդունման գործընթացում մեծացել է այն դերակատարների թիվը, որոնք ունեն սեփական շահերը և ձգտում են դրանք առավելագույնըս ներկայացնել ձևավորված որոշման մեջ, ընդ որում, ավելի ու ավելի է ընդգծվում անհատների դերը: Տեղեկատվահաղորդակցական միջոցների՝ հատկապես համացանցի հասանելիության հնարավորությունների մեծացման շնորհիվ աշխարհի տարբեր հատվածներում անհատ – հասարակություն փոխգործակցության մեջ աճում է անհատի՝ գիտակցական մասնակցության նշանակությունը: Հասարակությունը համաշխարհային քաղաքական կյանքում արդեն հանդես է գալիս ոչ միայն որպես տարաբնույթ խմբերի միասնություն, այլև այդ խմբերի մաս կազմող գիտակից անհատների համախումբ, ընդ որում, քաղաքական որոշումների կայացման մեխանիզմներում հաճախ ընդգծվում են հենց այդ անհատների մոտեցումները: Գլոբալացված աշխարհում դերակատար դառնալով՝ ազգը, և՛ արևմտյան, և՛ ավանդական ընկալմամբ, իր գործառույթների իրականացման շրջանակում առանցքային տեղ է հատկացնում անհատների շահերի բավարարմանը: Ոչ արևմտյան քաղաքակրթությունների զարգացման ընթացքի կտրուկ աճը հիմնականում անհատների գիտակցության արդիականացման արդյունք էր:

Երկրորդ, արդեն ընդունված որոշումները կարող են կանխատեսվող արդյունավետությունը չունենալ՝ կապված հասարակության ու նրա առանձին հատվածների քաղաքական սպասումների, դրսևորման հնարավորությունների և հիմնավոր ու չհիմնավորված հավակնությունների առկայության հետ: Կարելի է նշել «Արաբական գարնան» շրջանակում Եգիպտոսում ծավալված իրադարձությունները, երբ առաջին իսկ հուզումներից անհանգստացած իշխող վարչակարգը քաղաքական որոշում ընդունեց՝ իրականացնել լայնամասշտաբ բարեփոխումներ, իսկ նախագահ Հ. Մուբարաքը հայտարարեց, որ նախագահության ժամկետի ավարտից հետո հեռանալու է իշխանությունից<sup>5</sup>: Մակայն դա չբավարարեց հասարակական սպասումները, որի հետևանքը եղավ իշխող վարչակարգի վերջնական տապալումը:

Անցումային հասարակություններում իշխող վարչակազմը քաղաքական որոշումներ ընդունելիս շատ դեպքերում չի կատարում տարբեր շահագրգիռ կողմերի մոտեցումների վերլուծություն՝ հաշվի է առնելով միայն վերնախավի որևէ հատվածի շահերը, իսկ անհատների կարծիքները ստորադասվում են խմբային շահերին, ինչի հետևանքով, կայացված որոշումները չեն արտացոլում հասարակու-

<sup>5</sup> Политическое цунами: аналитика событий в Северной Африке и на Ближнем Востоке (под. ред. С. Кургияна), М., 2011, с. 186.

թյունում տիրող տրամադրությունները: Իսկ բազմաէթնիկ տարածաշրջաններում հասարակության մաս կազմող տարբեր խմբերի շահերը չբավարարելը առաջացնում է կոշտ հակազդեցություն, ինչը կարող է վերաճել մինչև անգամ գերակայող խմբի նկատմամբ անհանդուրժողականության, քաղաքական համակարգի լեգիտիմության անկման, հասարակության այլ հատվածներից բնեռացման, նույնիսկ՝ զինված հակամարտության: Ինչպես նշում է Միքիայի Արաբական Հանրապետության նախագահ Բաշար ալ-Ասադը, «15 վայրկյան է անհրաժեշտ օրենքի ստորագրման համար, բայց եթե այն չհամապատասխանի հասարակության սպասումներին, կստանաք քայքայում»<sup>6</sup>: Մյուս կողմից, տնտեսական համակարգի անկատարությունն է հասցնում միջխմբային հակասությունների, քանի որ «...գոյության փոքրաքանակ աղբյուրների, ինչպես, օրինակ, աշխատատեղերի համար պայքարում մարդիկ միմյանց համարում են մրցակիցներ»<sup>7</sup>: Էթնոսի մարզինալացման օրինակ է Թուրքիայում քրդական համայնքը: Այստեղ վերնից պարտադրվող քաղաքական որոշումները հիմնականում մերժվում են, քանի որ դրանցում մեծ մասամբ հաշվի չեն առնվում քրդական համայնքի մտեցումները:

Բազմաէթնիկ տարածաշրջաններում ներքին քաղաքականության սոցիալական ուղղվածությունը հիմնականում հանգում է ներգաղթյալների խնդիրների լուծմանը, հատկապես նրանց մարզինալացման հավանականության փոքրացման նպատակով: Սակայն էթնիկական խմբերի միջև մրցակցությունն ամեն դեպքում չի նվազում<sup>8</sup>, և անգամ նոր ձևավորվող էթնիկական խումբը տվյալ տարածաշրջանում կարող է ընկալվել որպես նոր մրցակից: Ոչ արևմտյան քաղաքակրթությունների զարգացման համատեքստում այսպիսի հակասությունները կարող են կասեցնել հասարակության տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային առաջընթացը: Բազմաէթնիկ հասարակության բնականոն և հավասարակշռված արդիականացման առումով կարևոր նշանակություն ունեն տարբեր էթնիկ խմբերի՝ քաղաքացիական ինքնագիտակցության հասնելը և գերակա-յող խմբի մշակութային արժեքներն ընդունելը: Այսօրինակ համախմբման ապահովման նպատակով հարկավոր է փոխադարձ հարգանք ցուցաբերել հասարակության մաս կազմող տարբեր էթնիկ խմբերի արժեքային համակարգերի նկատմամբ. «Քաղաքականությունը նշանակություն ունի, բայց ոչ պակաս նշանակություն ունի նաև այն շրջապատող սիմվոլիզմը»<sup>9</sup>: Քանի որ քաղաքական հակամարտությունների դաշտը տրոհված է, իշխանություն – ընդդիմություն դասական թևերի հետ մեկտեղ առկա են և՛ խառնակչախմբեր, և՛ անորոշություններ հրահրող խմբեր, և՛ քաղաքական տարաբնույթ գործընթացների վրա նշանակալի ազդեցություն ունեցող սովերային դերակատարներ, ուստի, այսպիսի բազմաչափ տարածությունում անհրաժեշտ են բավական խրթին լուծումներ բռնությունների բացառման, հակամարտությունների խաղաղ փոխակերպման, դրանք բնա-

<sup>6</sup> Assad: Challenge Syria at your peril/The Telegraph, Sunday 30 October 2011.

<sup>7</sup> Оутмен Брюс. Этнические группы и меньшинства <http://www.4uth.gov.ua/usa/russian/facts/ethnic.htm>

<sup>8</sup> Социальное неравенство этнических групп: представления и реальность (под ред. Л. М. Дробичева), М., 2002, с. 9.

<sup>9</sup> Закария Ф., նշվ. աշխ., էջ 238:

կանոն հուն ուղղորդելու միջոցների հայտնաբերման և կիրառման համար: Հարկավոր է հատկապես հաշվի առնել հասարակության մաս կազմող էթնիկ փոքրամասնությունների ազգային ինքնագիտակցության դրսևորումների վրա իրականացվող միջոցառումների ազդեցությունը. «Միջազգային բախումների էթնոմշակութային և սոցիալ-հոգեբանական պատճառ կարող է դառնալ ազգային զգացմունքների ոտնահարումը...»<sup>10</sup>: Բնչպես քաղաքական և էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների, այնպես էլ ամենատարբեր խմբերի, մասնագիտական որակներ դրսևորող անհատների, կազմակերպությունների ներգրավվածությունը քաղաքական որոշումների ընդունման նախապատրաստական փուլում՝ նրանց շահերի և հավակնությունների հաշվառմամբ, հնարավորություն կտա բարձրացնելու քաղաքական որոշումների արդյունավետությունը՝ ապահովելով դրանց անխոչընդոտ իրականացումը և որոշումների ընդունման թափանցիկությունը: Մյսայիսով, նշանակալիորեն կմեղմվի վերոնշյալ խնդիրների բացասական ազդեցությունը հասարակության համընդհանուր արդիականացման, քաղաքակրթական հատվածի զարգացման վրա:

Էթնիկ խմբերում, սկսած ձևավորման գործընթացից, մեծ է հուզական դաշտի դերը: Էթնիկ կապերն արդեն որոշակի հուզական հատկանիշների վրա են հիմնված. էթնիկական կապերը «կարող են սրբացնել էթնիկ խորհրդանիշները, առաջացնել կրոնականին համանման զգացմունքներ՝ և՛ խորությամբ, և՛ ուժով»<sup>11</sup>: Հասարակության արդիականացման գործընթացում, էթնիկ խմբերի զգացական դաշտի հնարավոր հակազդեցությամբ պայմանավորված, հատկապես ոչ արևմտյան քաղաքակրթություններում անհրաժեշտ է հաշվի առնել նաև էթնիկ խմբերի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները: Սոցիալ-տնտեսական, մշակութային ոլորտներում իրականացվող ծրագրերում տարբեր էթնիկ խմբերի պատմությանը, կենսաձևին, արժեքներին անդրադարձ կատարելով, հասարակությունում նրանց դերը շեշտելով՝ ինչին հնարավոր է նպաստել սվյալ խմբի ինտեգրմանը, հակամարտությունների խաղաղ փոխակերպման հիմքեր ստեղծել, համագործակցության մշակույթ ձևավորել:

Քաղաքակրթությունների զարգացման գործընթացի տրամաբանությունն առաջին հերթին ենթադրում է մշակութային արդիականացում: Մշակութային բազմազանությամբ պայմանավորված՝ բազմաէթնիկ տարածաշրջաններում առավել բարդ է ընթանում մշակութային արդիականացումը, սակայն հասարակության զարգացումն անխուսափելիորեն հաղթահարում է այդ խոչընդոտը՝ երբեմն որևէ ենթամշակույթի կամ մշակութային առանձնահատկության վերացման հաշվին. «Ամեն մի մշակույթ ունի իր առանձնահատկությունները, և դրանցից որոշները դիմանում են արդիականացման փոքր-ձաքննությանը: Մյուսներն անհետանում են...»<sup>12</sup>: Հետևապես, ոչ արևմտյան քաղաքակրթությունների զարգացումը վաղ թե ուշ կհարթեցնի

<sup>10</sup> Антоян Ю. М., Давитадзе М. Д. Этнорелигиозные конфликты: проблемы, решения, М., 2004, с. 35.

<sup>11</sup> Мнацаканян М. О. Национализм и глобализм. Национальная жизнь в современном мире, М., 2008.

<sup>12</sup> Захария Ф., նշվ, աշխ., էջ 105:

հասարակությունում առկա էթնովալույթային հակասությունները, իսկ համաշխարհային քաղաքական դաշտում էթնիկ խմբերը հասարակության սահմաններից դուրս ինքնադրստրման հնարավորություններ կստանան: Այնուամենայնիվ, քաղաքական որոշումներ կայացնելիս և հասարակության զարգացման ուղենիշը գծագրելիս հատուկ ուշադրության արժանացնելով էթնիկ խմբերի մշակութային, սոցիալական, տնտեսական, քաղաքական նորմերին և ակնկալիքներին՝ կարելի է նշանակալիորեն նվազեցնել քաղաքական ռիսկը:

Հայաստանի Հանրապետության համար կարևորություն ունի բազմաէթնիկ տարածքներում հանգրվանող հայկական էթնիկ խմբերի մասնակցության հարցը «համընդհանուր վերելքին»: Սփյուռքի հայկական էթնիկ խմբերը, «Հայկական աշխարհի» մոդելավորման տրամաբանության մեջ, տվյալ հասարակությունում ինտեգրման և տվյալ քաղաքակրթական հարթության հետ համատեղ արդիականացման առաքելություն ունեն: Գլոբալ աշխարհին հայկական քաղաքակրթությունը ներկայացնելու մեխանիզմի մաս կազմելով՝ սփյուռքի հայությունը, սեփական շահերն ու մոտեցումներն արժարժելու հետ միաժամանակ, երկու խնդիր է լուծում. նախ, որպես հայկական մշակույթը կրող, այն համադրում է այլ մշակույթներին, որի շնորհիվ բյուրեղանում են մրցունակ արժեքները: Երկրորդ, ռեսուրսներ է կուտակում, որոնք հայկական քաղաքակրթության ցանցային մեխանիզմում դառնում են ողջ հայության սեփականությունը:

Եթե զարգացած երկրներում բնակվող հայերը, գտնվելով կայուն ու համաչափ արդիականացվող հասարակություններում, հիմնականում կարողանում են արդիականացման միջոցով ինքնահաստատվել, ապա ոչ արևմտյան քաղաքակրթություններում մեծ է մարզինալացման հավանականությունը: Այստեղ առանցքային նշանակություն են ստանում «Հայկական աշխարհի» տեղեկատվական, սոցիալական, մշակութային ցանցերը, որոնց կողմից իրականացվող գործառնությունների՝ հավաքագրման, ուսուցման, փոխօգնության, գործարկման միջոցով անհատը հնարավորություն կստանա բացահայտել և ներկայացնել սեփական «եսը» իր համար անձանթ, համարժեք կամ հակադիր արժեքային համակարգ ունեցող մշակութային տարածություններում. «Ամբողջ աշխարհով մեկ սփռված հայ ժողովուրդը հատկապես ազգային համախմբման կայուն մեխանիզմների գործարկման կարիք է զգում»<sup>13</sup>: Այսպիսի մեխանիզմների հաստատումը տարաբնույթ զարգացող հասարակություններում կարող է հայերի միջև ամենատարբեր ոլորտներում համագործակցության մշակույթի ձևավորման հիմք դառնալ: Նմանօրինակ համագործակցության շարունակականությունը, համատեղ աշխատանքը՝ կենտրոն – ծայրամաս և ծայրամաս – ծայրամաս խողովակներով կարող է հանգեցնել հայկական քաղաքակրթության բյուրեղացման, արդիականացման և համաշխարհային ասպարեզում ներկայանալու գործընթացների

<sup>13</sup> *Голос Армении*, 11.X.2011.

արդյունավետության նշանակալի բարձրացման: Բնականաբար, առավել բարձր արդյունավետություն կնկատվի այն տարածքներում, որտեղ գործում են հայկական կազմակերպված էթնիկ միավորումներ:

Ժամանակակից աշխարհում փոքր և մեծ էթնիկ խմբերը գլոբալացման գործընթացին խոչընդոտող գործոնից վերածվում են համագործակցող օղակի: Ոչ արևմտյան քաղաքակրթությունների զարգացումը ճանապարհ է հարթում էթնիկ խմբերի համար նոր աշխարհի ձևավորման գործընթացում առավել մեծ դերակատարում ունենալու և սեփական շահերը պաշտպանելու: Ըստ այդմ, մեծանում են տարբեր էթնոսների՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության իրականացման գործընթացում քաղաքական մասնակցության հնարավորությունները: Հասարակության մաս կազմող բոլոր էթնիկ խմբերի նկատմամբ հանրության հավասարաբժեք մոտեցումը, նրանց շահերն արձարծելու և ներկայացնելու, ներքին քաղաքականության մշակմանը մասնակցության տարաբնույթ ձևերի ապահովումն այն նախադրյալներն են, որոնց միջոցով էթնիկ խումբը հասարակության բոլոր հատվածների հետ համարժեք արդիականանալով՝ կնպաստի ողջ հասարակության վերելքին:

**РОЛЬ ЭТНИЧЕСКИХ ГРУПП  
В МОДЕРНИЗАЦИИ НЕЗАПАДНЫХ ЦИВИЛИЗАЦИЙ**

ГЕВОНДЯН Р. В.

**Резюме**

Во всем мире растет значение незападных политических процессов. Ощущается снижение роли “Запада”. В таких условиях этнические группы действуют в соответствии со своими интересами, становясь весомым звеном в процессе политической модернизации незападного политического пространства, что относится и к армянской диаспоре. В процессе консолидации общества важное значение приобретает взаимное уважение и сопоставление интересов разных этнических групп.